



ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Հոկտեմբեր 2024

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՒ ԵՍ

Մայրենի լեզուն պահելը արուեստ մըն է, այսինքն ձեռք մըն է, որ միայն ու միայն հայերենը պահել ուզողը գիտէ անոր պահելու գաղտնիքը:

Ինչպէս ամէն նկարիչ իր նկարած արուեստի կտորը մեծ սիրով ու համբերութեամբ կը ստեղծէ ու անոր արժէքը գիտնալով կը պահէ բարձր տեղ մը եւ կամ հպարտութեամբ կը ցուցադրէ եւ կ'ուզէ, որ մարդիկ ես յարգեն իր արուեստը: Այսպէս է նաեւ հայերէն լեզուն ունեցող «արուեստագէտին» դերը: Այս պարագային դրն էս, մե'նք ենք, եւ բոլորս ենք հայերէնը պահողները: Բնական է, որ կ'ուզենք զայն պահել մաքուր, գեղեցիկ ու բարձր:

Կայ արդեօք ուժ մը, որ կրնայ մեզ ստիպել, որ մենք հայերէնը չպահենք, այսինքն չտորվինք եւ չխօսինք:

Մենք ենք մեր լեզուին տէրը ու զայն պահողը:

Ահաասիկ գաղտնիքը: Պզտիկ վարժանքով հայերէնը կրնայ զօրանալ ու մեծնալ, եթէ մե'նք որոշենք զայն պահել ու զօրացնել:

Յիշենք մեր բանաստեղծներէն Խաչիկ Դաշտենցի այս տողերը.

*«Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,
Մեր շուրջը կը խօսին այլօրէն,
Ե՛կ խօսինք եղբայր իմ,
Հայերէն»:*

ՄԵՐ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԸ

Մեր այբուբենի հայրը, մեր առաջին ուսուցիչը՝ Մեսրոպ Մաշտոց, ծնած է մօտաւորապէս 365 թուականին, Տարօն նահանգի Հացեկաց գիւղը:

Սահակ Պարթեւ կաթողիկոսի քաջալերանքով եւ Վոսմապուի թագաւորի օգնութեամբ, Մեսրոպ Մաշտոց ստեղծեց հայերէն այբուբենը:

Այդ շրջանին, պարսկերէն եւ յունարէն լեզուները կը տիրապետէին Հայաստանի վրայ: Բոլոր եկեղեցական շարականները կը կարդացուէին այլ լեզուներով: Ժողովուրդին համար այս լեզուները անհասկնալի էին:

Հայերէն լեզուն այս պատճառով ալ հետզհետէ կորսուելու վտանգի մէջ էր:

Մեսրոպ Մաշտոց այս վտանգին անդրադարձաւ եւ որոշեց ստեղծել հայերէն տառերը:

Մեսրոպ Մաշտոց երկար տարիներ ուսումնասիրութիւններ ընելէ ետք, 405 թուականին կը ստեղծէ հայերէն գիրերու մեծամասնութիւնը՝ 36 տառ, հետագային կ'աւելնան Օ եւ Ֆ տառերը:

Գիրերու գիտէն ետք Հայաստանի մէջ դպրոցներ կը բացուին, եւ Աստուածաշունչէն կը թարգմանուի առաջին նախադասութիւնը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»


Պահենք մեր լեզուն՝ մեր հարստութիւնը եւ մեր գոյութեան բանալին:



Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ Մաշտոց



Վոսմապուի թագաւոր



ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ Է

Հայոց աշխարհի մէջ, Մեսրոպ Մաշտոցի հնարած գիրերը դարձան ինքնապաշտպանութեան զէնք ու վահան, դարձան հայ ժողովուրդի յարատեւ գոյութեան երաշխիք՝ ապահովելով հայ ժողովուրդի ինքնութիւնը: Այն ինչ չկարողացան ընել հայոց արքաները զէնքով, Մեսրոպ Մաշտոցը ըրաւ իր հրեղէն տառերով: Ան ոչ միայն փրկեց հայ ժողովուրդը ծովումէ, այլեւ տուաւ անոր ուժ՝ անմեռ արժէքներ ստեղծելու:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ ՀԻՄԵՐԸ ԿՈՒ ԳԱՆ 5-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԿԻՉԲԷՆ




Այբուբենի գիտէն ետք, Մեսրոպ Մաշտոց եւ Սահակ Պարթեւ հիմը կը դնեն հայոց ազգային դպրոցին: Այսպէս, 5-րդ դարու սկիզբին, Մեսրոպ Մաշտոց Ամարասի վանքին մէջ կը բանայ Արցախի առաջին դպրոցը: Հոս նշենք թէ Ամարասը կը գտնուի Արցախի Մարտունի շրջանին մէջ: Ամարասի վանքը հայկական եօթը հնագոյն վանքերէն մէկն է: Նշենք նաեւ թէ 4-րդ դարու սկիզբին Ամարասի վանքի եկեղեցին հիմնած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, իսկ շինութիւնը աւարտած է Լուսաւորիչի թողը՝ Գրիգորիս Եպիսկոպոսը: Դարեր շարունակ, Ամարասի վանքն ու իր դպրոցը եղած են կրօնական եւ մշակութային կեդրոն: 15-էն 16-րդ դարերուն այնտեղ գրուած եւ ընդօրինակուած են բազմաթիւ ձեռագիրներ:

**Մեր գիրն ու լեզուն կը փարբերեն մեզ ուրիշ ազգերէ:
Մեր ինքնութիւնը պահելու եւ արժանապարտութեամբ
ապրելու համար, կարդանք ու խօսինք հայերէն:**

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԵՆ ԱՌԱՋ

Նախաքրիստոնէական շրջանին, այսինքն 301 թուականէն առաջ, արձանագրութիւններ կատարելու համար, հայերը օգտագործած են սեպագիրը եւ մեհենագիրը (հիերոկլիֆ):


Մինչեւ Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիտը հայերը օգտագործած են խեթալուիական հիերոկլիֆներ, ասորական եւ ուրարտական սեպագիրներ, արամէական, յունական եւ ասորական եւ պարսկական (պահլաւական) գիրեր:



Նախամաշտոցեան հայ գիրեր



Վանի Թագաւորութեան սեպագիր արձանագրութիւններ (Վանի Թագաւորութիւնը հիմնուած է 859 թուականին Քրիստոսէ Առաջ)



Սեպագիր արձանագրութիւն Էրեբունի ամրոցի հիմնադրման մասին


ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏՈՎ ՈՒՆԵՑԱՆՔ ՄԵՐ ԱՅՐՈՒԲԵՆԸ



Մաշտոցեան Այբուբենը

ՄԵՐ ԱՅՐՈՒԲԵՆԸ

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ



Այբուբեն չէ սա
 Բերդ է անմատոյց,
 Գանձ է աննուած:
 Դուռ է փրկութեան,
 Ելք, երբ յոյս չկայ,
 Զարթօնքի նուագ:
 Էութիւնն է մեր,
 Ընթացքն ու ուղին,
 Թագ ու գորավար.
 Ժողովող մի կանչ,
 Իմաստուն խորհուրդ,
 Լինելու համար:
 Խունկը խորանի
 Ծողը բանի,
 Կնիքն ինքնութեան.
 Հացն հանապազօր հայի սեղանի,
 Զիրքերի հնձան:
 Ղօղանջը երգի, դեկը ընթացքի,
 Ճեմարան ճառի,
 Մարգարան մտքի, մատենա հաւատքի,
 Յաղթանակ է. իող անմար ջախի:
 Նախահիմքն է մեր,
 Շողը մեր յոյսի,
 Ոգին մեր ճարտար.
 Չինարին այգու,
 Պարիսպը մեր տան,
 Զրաղացն արդար:
 Ռումքն է մեր ռազմի,
 Ռունգը բնագրի,
 Ռահվիրան կեանքի,
 Սէրն ու սիրտն է մեր,
 Սերմը միշտ ծող,
 Վեմ ու վիմագիր:
 Տունը՝ ցամաքում,
 Տապանը ջրում,
 Րոպէն սլացքում,
 Յորեանը արտում,
 Ուղին անյայտում,
 Փառքը սխրանքում:
 Քիստն է ու քաղն է մեր,
 Քանքար ու քնար,
 Քարաւան ու ափ,
 Եւ
 Օճախն անմար,
 Օժիտն անհատնում
 Ֆէ-ից մինչեւ Այր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ինչ կը հասկնանք վաղ միջնադարեան ժամանակ ըսելով:

Հայաստանի վաղ միջնադարեան պատմութիւնը կը սկսի 301 թուականէն մինչեւ 10-րդ դար:

428 թուականին, Արշակունեաց թագաւորութեան անկումէն ետք, անկախութեան վերականգնման համար, Հայաստանի մէջ, հայ ժողովուրդը պայքարեցաւ աւելի քան չորս ու կէս դար:

451 թուականին, դէմ դնելու համար, պարսկական ազգային եւ կրօնական հալածանքներուն, տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը:

640 թուականէն ետք, Հայաստան արշաւեցին արաբները: Արաբական տիրապետութեան դէմ, 703-էն մինչեւ 855 թուական, հայերը բարձրացուցին շարք մը ապստամբութիւններ, որոնց իբրեւ հետեանք Հայաստան անկախացաւ:



762 թուականի արաբներու դէմ ազատագրական պայքարի հերոսներն էին Սահակ եւ Համազասպ Արծրունիներ: Այս երկու հերոսներուն հարդաքանդակները կան Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցիի պատին վրայ:


ԱՌԱՃՆԵՐ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ ԻՐԵՆՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՄԲ

- 1-Սուրին կտրածը կը լաւանայ, լեզուին կտրածը չի լաւանար:
- 1-Մարմնի պատճառած ցաւը կը բուժուի, բայց խօսքով ցաւցնելը դժուար թէ բուժուի:
- 2-Ինչքան լեզու գիտես՝ այդքան մարդ ես:
- 2-Որքան լեզուներ գիտես, այդքան դիւրաւ կը յարաբերիս տարբեր լեզու գիտցող մարդոց հետ:
- 3- Լեզուիդ չափ ու սահման դիր:
- 3- Զգոյշ եղիր, սխալ բաներ ըսելէ:
- 4-Լեզուն շատ երկար է:
- 4-Շատախօս եւ բամբաստող է:
- 5-Քաղցր լեզուն օձը ծակէն կը հանէ:
- 5-Երբ անուշութեամբ խօսիս, մարդիկ մտիկ կ'ընեն եւ կը համոզուին:

ԳԻՏԷՐԻ ԹԷ...

Առաջին հայկական տպագրուած գիրքը "Ուրբաթագիրք" «Ճառերու ժողովածու» է, որ տպագրուած է 1512 թուականին, Վենետիկի մէջ, Իտալիա: Այս գիրքը տպագրուած է Մովսէս Ջուղայեցիի կողմէ՝ վենետիկեան տպարանի օգնութեամբ: "Ուրբաթագիրք"-ը կը պարունակէ եկեղեցական եւ աստուածաբանական ճառեր, եւ անոր տպագրութիւնը կարեւոր նշանակութիւն ունեցաւ հայ գրականութեան եւ մշակոյթի պատմութեան մէջ:

Այս գիրքը կը փաստէ հայերու տպագրութեան մէջ ունեցած դարեր առաջ նշանակալի ձեռքբերումները եւ անոնց նպաստը հայկական մշակութային ժառանգութեան եւ պահպանման գործին մէջ:



«Ուրբաթագիրք», առաջին հայերէն տպագիր գիրք, Վենետիկ, 1512թ.



ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Մանրանկարչութիւնը գեղանկարչութեան ընտանիքին մաս կը կազմէ:

Մանրանկարչութիւնը ձեռագիր գիրքի պատկերազարդումն է: Կերպարուեստի ստեղծագործութիւն մըն է, որ իւրայատուկ է իր փոքր չափերով, նուրբ ու գեղեցիկ նկարչութեամբ:

Մինչեւ տպագրութեան գիտը, մարդիկ մանրանկարներով կը գրէին իրենց գիրքերը: Հին եգիպտական պապիրուսի վրայ գրուած մանրանկարչութիւնները պահուած են մինչեւ օրս:

405 թուականին երբ Մետրոպ Մաշտոց հնարեց հայերէն գիրերը եւ սկսան գրել հայերէնով դասագրքերն ու Աստուածաշունչը, այդ միջոցին զարգացաւ նաեւ հայկական մանրանկարչութիւնը: Հայկական մանրանկարչութիւններուն մէջ կը գտնենք որսի, կենդանիներու կռուի, պատերազմներու, սուրբերու եւ այլ նկարներ:

Հայկական մանրանկարչութեան կարեւոր դպրոցներէն եղած են Փոքր Հայքի, Անիի եւ Գլաձորի մանրանկարչութեան դպրոցները:

ՎԱՐՔ ՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐՊ «ՀԱԾԻՍ» ԵՒ «ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ»

Անահիտ Պալեան

Մենք առանձին չենք.
Մեր շուրջը կան մարդիկ
Տան մէջ ծնողք ու հարազատներ,
Դպրոցէն ներս ընկեր ընկերուհիներ,
Նաեւ տնօրէն, ուսուցիչ-ուսուցչուհիներ,
Դասարանը՝ դասընկեր-դասընկերուհիներ:
Այս շրջանակէն դուրս
Մեր շուրջը կան նաեւ
Ծանօթ բարեկամներ,
Կամ անծանօթ օտարներ:
Մենք առանձին չենք.
Եւ յաճախ պէտք ունինք
Մէկու մը օգնութեան
Խնդրելու այդ անձէն որեւէ բան.
Հրաշքի համազօր
Բառ մը կայ կարեւոր:
- Գիտէս որ բառն է:
- Այո... «Հաճիս»-ն է:
«Հաճիս մատիտդ կու տամ»:
«Հաճիս հետս կը խաղամ»:
Իսկ երբ քեզ օգնեն
Կամ խնդրանքդ կատարեն,
Քաղաքավարօրէն
Մի՛ մոռնար ըսելու
«Շնորհակալ եմ»:



ԽԱՂՈՂԸ

Խաղողի մշակումը սկսած է հազարաւոր տարիներ առաջ:

Հայաստանը խաղողագործութեան եւ գինեգործութեան հնագոյն կեդրոններէն մէկն է, այս մէկը փաստուած է Էրեբունիի պեղումներու ժամանակ, ուր գտնուած են գինիի մատաններ, կարասներ, խաղողի ածխացած սերմեր:

Հայաստանի մէջ 5000 տեսակ խաղողներէն, ներկայիս կը մշակուի մօտաւորապէս 200 տեսակներ: Սպիտակ Արաքսենին, Սպիտակ Սաթենին, Դեղին Երեւանին, Ոսկեհատը, Սեւ Արենին եւայլն...:

Խաղողէն կը ստանանք գինի, հիւր, անուշ, չամիչ եւ գացախ:

Հայկական խաղողները իրենց քաղցրութեամբ եւ հոտով օտարներու կողմէ ճանչցուած են եւ արժանացած բազմաթիւ մրցանակներու:

Ներկայիս Գանատայի շուկաներուն մէջ կը գտնենք հայկական զանազան գինիներ ինչպէս Արենին, Կարասը եւ հայկական գոնիակը եւայլն...:

Հայաստանի մէջ հին ժամանակ խաղողի բերքահաւաքը ուրախութեան եւ խնդութեան տօներէն եղած է: Խաղողի նկարները կը գտնենք միջնադարեան յուշարձաններուն բարձրաքանդակներուն, խաչքարերուն եւ մանրանկարչութեան վրայ պատկերուած, որպէս ամենասիրելի զարդանշան հայ հոգիին զուարթութեան եւ կենսուրախութեան խորհրդանիշ:

**ՀՈՐԻԶՈՆ ՇԱՐՔԱԹԱԹԵՐԹԸ
45 ՏԱՐԵԿԱՆ Է**

ԻՍԿ ՀՈՐԻԶՈՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆԸ՝
25 ՏԱՐԵԿԱՆ

ՀՈՐԻԶՈՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆը մանկապատանեկան յաելուածն է ՀՈՐԻԶՈՆ ՇԱՐՔԱԹԱԹԵՐԹԻՆ, որուն 45-ամեակն է այս տարի: Այս առթի շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան եւ ՀՕՄ-ի Գանատայի մասնաճիւղերուն, որոնք կը հովանաւորեն ՀՈՐԻԶՈՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆը:

Գուրգուրանք հայ թերթին, կարգանք ու տարածենք զայն:



ՀՈՐԻԶՈՆԻՆ

Անահիտ Պալեան

Հայրենիքին մեզ կամրջող դուն հայ օրկան, Անցնիս հայաշունչ սեմերէն ներս անվարան. Հոն, գլուխները խոնարհած, աչքերն ուղղուած Պատկերներուդ ու լուրերուդ այլազան, Լոյսդ կը սփռես Լուսաւորչի Կանթեղի նման:

Դուն մեզ սնո՞ղ, զինո՞ղ հայ մտքի օրրան, Դարու պահանջներուն համաձայն Անցիր առաջ, երթո՞ղ ըլլայ անխափան. Գնա՛ այնպէս, որ սերունդները վաղուան Հակառակ հոսանքներուն այլասերման, Պայքարի ջահերը միշտ վառ պահած յառաջանան եւ դուն մնաս ապառաժի նման յալիտեան:



**ՋՐԱՐՋ
(Raton Laveur / Raccoon)**

Ջրարջերը գիշերային, գիշատիչ կաթնասուններ (անասուն, որ իր ձագերը կաթով կը կերակրէ) են: Անոնք ամէն բան կ'ուտեն: Կը նկատուին որպէս խելացի եւ վստակար կենդանիներ, յաճախ անախորժութիւններ առաջացնող: Իրենց խելացութեան եւ ճարպիկութեան շնորհիւ, անոնք կրնան ապրիլ տարբեր միջավայրերու մէջ, նոյնիսկ քաղաքին մէջ: Կրնանք տեսնել զիրենք տան բակերուն մէջ կամ ճամբաները:

Ջրարջերը տարօրինակ կենդանիներ են: Իրենց բթամատի օգնութեամբ կրնան բանալ տարբեր գոց առարկաներ, ինչպէս օրինակ՝ աղբաման, դուռ, եւ այլն: Անոնք իրենց ճկուն թաթերով եւ սուր ճանկերով դիւրութեամբ կը մագլցին ծառերուն վրայ: Անոնց ետեւի թաթերը նման են մարդոց եւ արջերու ոտքերուն: Ջրարջերու աչքերուն շուրջը սեւ է, շրջապատուած ճերմակով: Անոնք ունին աղ-պղպեղ մուշտակ. նաեւ գծաւոր՝ մոխրագոյն ու սեւ գոյներով պոչ:

Ջրարջ կը կոչուին, որովհետեւ անոնք իրենց ուտելիքը չկերած, ջրի մէջ թրջելու սովորութիւն ունին: Այդպէս՝ կերակուրը ջրի մէջ թաթխելէ ետք, կ'որոշեն զայն ուտել թէ ոչ:

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ

Պահուած բառը հայերէն գիրերու անունն է: _____

մ	ա	շ	տ	ն	ց	կ	ե	թ
ե	հ	է	ա	յ	ի	հ	բ	ա
ս	ա	ջ	ղ	բ	ն	ա	ս	բ
բ	յ	ա	ց	բ	ճ	յ	ն	գ
ն	ա	ղ	ա	ն	ք	ե	ւ	մ
պ	ա	ճ	ա	բ	ւ	բ	բ	ա
ք	ա	հ	ի	բ	բ	է	բ	ն
տ	ա	գ	գ	ի	բ	ն	ն	ե
ց	մ	ա	յ	բ	ե	ն	ի	լ

աղ թարգմանել հաց սուրբ
գիր հայ մաշտոց տաղ
գիրք հայերէն մետրոպ տաճար
էջ հանճար մայրենի քաղցրիկ

Ո՞Վ Կ'ՈՒՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ

- 1- Լեզուիդ չափ ու սահման դիր: Կը նշանակէ**
ա- Լեզուդ բռնէ:
բ- Լեզուդ չափէ:
գ- Զգոյշ եղիր, սխալ բաներ ըսելէ:
- 2- Առաջին հայկական տպագրուած գիրքը կը կոչուի**
ա- Դասագիրք
բ- Շաբաթագիրք
գ- Ուրբաթագիրք
- 3- Այս գիրքը կը պարունակէ**
ա- եկեղեցական եւ աստուածաբանական ճառեր
բ- մարզական նիւթեր
գ- Հայաստանի քարտէսներ
- 4- Հայկական խաղողները օտարներու կողմէ ճանչցուած են իրենց**
ա- քաղցրութեամբ եւ հոտով
բ- բազմաթիւ գոյներ ունենալով
գ- բազմաթիւ հատիկներով
- 5- Խաղողի նկարները կը գտնենք**
ա- յուշարձաններուն եւ բարձրաքանդակներուն վրայ
բ- խաչքարերուն վրայ եւ մանրանկարչութեան մէջ
գ- վերի երկու պատասխանները ճիշդ են:
- 6- Մանրանկարչութիւնը զարգացաւ**
ա- բազմաթիւ տարիներ առաջ
բ- 405 թուականէն ի վեր
գ- 1600 թուականէն ետք
- 7- Ո՞վ է մեր առաջին ուսուցիչը**
ա- մեր մայրը
բ- Ծաղկոցի ուսուցիչը
գ- Մետրոպ Մաշտոց
- 8- Վռամշապուի թագաւորի ժամանակ տիրապետող լեզուներն էին**
ա- Պարսկերէն եւ յունարէնը
բ- Անգլերէնը
գ- Ֆրանսերէնը
- 9- Քաղցր լեզուն օձը ծակէն կը հանէ: Կը նշանակէ**
ա- Շատախօս եւ բամբաստող է:
բ- Երբ անուշութեամբ խօսիս մարդիկ մտիկ կ'ընեն եւ կը համոզուին:
գ- Զգոյշ եղիր, սխալ բաներ ըսելէ:
- 10- Մետրոպ Մաշտոց ստեղծեց հայերէն այբուբենը**
ա- Սահակ Պարթեւ Կաթողիկոսի քաջալերանքով
բ- Վռամշապուի թագաւորի օգնութեամբ
գ- վերի երկու պատասխանները ճիշդ են:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Զեփիւռ Ասատուրեան
Զեւայղացք՝ Լորի Խաչերեանի